

ԿԱՐԵՒՌ ՃԵՏՈՒՄՆԵՐ ՄԻ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ Ս.ՌԻԹ ԱՎ.

Հայկական բազմահատոր հանրագիտարանը, որի պատրաստութեանը ձեռնամուխն են եղել մեր Հանրապետութեան մշակոյթի ականաւոր գործիչները, առաջին փորձն է մեր ազգային բազմադարեան պատմութեան մէջ. Հետեւաբար նման ձեռնարկը որքան պատւաբեր է մեր Հանրապետութեան համար, նոյնքան եւ դժւարին պատրաստողների համար:

Հայկական հանրագիտարանը, որը հանդիսանալու է մեր Հանրապետութեան մշակոյթի մշակարդակի վկայացոյցը, պէտք է նախ եւ առաջ քունենայ ըստ հնարաւորին մնայուն արժէք, երկրորդ՝ պէտք է համապատասխանի ժամանակակից դիտութեան պահանջներին, եւ երրորդ՝ պէտք է զերծ լինի այս կամ այն հարցի շուրջ յայտնած այնպիսի տեսակէտներից, որոնք, նորութիւն լինելով առ երեւոյթու, չունեն վաւերական հիմք եւ հրապարակւում են սոսկ պարագայական նկատումներով:

Ներկայ յօդւածում մենք ուղղում ենք քննութեան առնել մի աշխատութեան մէջ յայտնած վիճելի տեսակէտներ, որոնք յանձնաբարեկ են նաեւ հանրագիտարանի համար:

Բանասէր Աւետիս Շահսուլարեանը 1960ին հրատարակել է 180 էջոց մի աշխատութիւն, «Աւետիսնան եւ հայ մատենագրութիւնը» խորագրով:

Հեղինակը իր աշխատութեան մէջ աշխատել է երեւան բերել Աւետիսնայի եւ հայ մատենագրութեան որոշ գործերի միջեւ դրական առընչութիւնները: Աշխատութեան մէջ զգալի տեղ է յատկացւած նաեւ Դանաէի առընչութիւններին Աւետիսնայի եւ հայ մատենագրութեան հետ:

Շահսուլարեանը յետագայում վերջին հարցը արծարծեց նաեւ մեր մամուլում (տես «Գրական թերթ» 1969, թիւ 15) եւ առաջադրեց իր տեսակէտները Հանրագիտարանի համար, նկատի ունենալով Հանրագիտարանի «Հայկական թերթում»:

Դանաէի մահաւան 650ամեակի առիթով, որ լրացաւ այս տարի, մենք կարեւոր ենք համարում անդրադառնալ Շահսուլարեանի արծարծած հարցին, նկատի ունենալով յիշեալ աշխատութիւնը, ուր

հեղինակը հանդամանօրէն շարադրել եւ «Հիմնաւորել» է իր տեսակէսները:

Անցեալում, ինչպէս Արեւմուտքում, այնպէս էլ մեզ մօտ, չօշափւել է Դանտէի «Աստածային կատակերգութեան» վրայ իսլամական գրականութեան աղղեցութեան հարցը:

1920ական թւականներին այդ հարցին առաջին դիտական հիմնաւորումը տևեց իսպանացի իսլամագէտ Ասին Պալասիոսը: Պալասիոսը 1919ին Մադրիդում իսպաններէն լեզով հրատարակած իր «Մուսուլմանական էսկատոլոգիան Աստածային կատակերգութեան մէջ» երկում՝ իր թեղը հիմնաւորել էր միջնադարեան արաբ գրող եւ փիլիսոփայ Արուլ-Ալա-Մահարիի (973-1057) «Սանդուղքի գրքի» եւ Դանտէի «Աստածային կատակերգութեան» ենթակայական նմանութիւնների վրայ: Նկատենք, որ եթէ «Աստածային կատակերգութեան» մէջ Դանտէն ինքն է ճանապարհորդում եւ տեսնում հոգիների վիճակը հանդերձեալ աշխարհում, ապա «Սանդուղքի գրքում» նոյնն անում է իսլամութեան հիմնադիր Մահմեդը:

«Սանդուղքի գրքի» եւ «Աստածային կատակերգութեան» միջեւ նմանութեան թեղն ունէր, սակայն, վիճելի կողմեր, որոնք երեւան էր բերել իտալացի հետազոտող Ջերուլիին 1949ին հրատարակած մի աշխատութեան մէջ:

Դանտէի «Աստածային կատակերգութեան» վրայ Արեւելքի աղդեցութեան հարցը ժամանակին առաջադրել են նաեւ ոռու արեւելագէտներ Կրաչկովսկին եւ Բերտելսը: Սակայն Կրաչկովսկին եւ Բերտելսը այդ հարցը առաջադրել են իրեւ վարկած եւ ոչ վճռական եւ վերջնական կարծիք:

Վերջին տարիներս Դանտէի ստեղծագործութեան վրայ մուսուլմանական դրականութեան աղղեցութեան հարցին մի ակնարկով անդրադարձել է Գոլենիչչեւ-Կուտողովը դիտական մի ժողովածուի մէջ տպադրւած իր յօդածում:

«Ենքնք, սակայն, — զգել է ականաւոր դանտէագէտն իր յօդւածում, — որ «Աստածային կատակերգութեան» արխիխնկութիկայի եւ հիմնական գաղափարների վրայ արարական գրականութեան աղղեցութեան հարցը մեզ թւում է շատ վիճելի»¹: Այնուհետեւ յօդւածի ստորակայ ծանօթութեան մէջ ոռու դանտէագէտը նշել է, որ Ասին Պալասիոսի «Մուսուլմանական էսկատոլոգիան» պէտք է օգտագոր-

1. И. Голенищев-Кутузов, Данте и Предвоздраждение, в кн. Литература эпохи Возрождения, изд. «Наука», М., 1967, стр. 73.

Թուս դանտէագէտը նոյնը պնդել է, իտալացի եւ ֆրանսացի հեղինակաւոր դանտէագէտների վկայակրնութեամբ, վերջերս լոյս տեսած իր կոթողային աշխատութեան մէջ (անգլ. И. Голенищев-Кутузов, Творчество Данте и мировая культура, изд. «Наука», Москва, 1971, стр. 154).

ծագացատ զգուշօրէն : Հարկաւոր է հաշվի առնել Զերուլիի աշխատութիւնը՝ «Սանդուղքի գիրքը եւ Աստածային կատակերգութեան արաբա-իսպանական աղբիւրների հարցը» :

Մենք ուշի ուշով հետեւել ենք ժամանակակից ուսւսական դանտէագիտական գրականութեանը եւ ոչ մի հեղինակի մօտ չենք գտել նշում տւեալ հարցի մասին, բացի Գոլենիչչեւկուտուղովի այս թուուցիկ ակնարկից :

Ժամանակակից դանտէագիտութիւնը գտնում է, որ Դանտէի ըստեղծագործութեանը վրայ աղդել են ոչ թէ իսլամական պատկերացումները հանդերձեալ կեանքի մասին, այլ իսլամական որոշ արմատական գաղափարները, որոնք իրապէս շրջանառութեան մէջ էին Դանտէի դարաշրջանում :

Հակառակ այս իրողութեան, Շահսուլարեանն իր աշխատութեան մէջ ընդարձակ մի գլուխ է նւիրել ապացուցելու համար նախ Աւիցեննայի «Հայյ-Իրն-Եաքզան» վիպակի աղջեցութիւնը Դանտէի «Կատակերգութեան» յօրինածքի վրայ, եւ ապա երեւան բերելու առընչութիւնները Դանտէի «Կատակերգութեան» եւ հայկական աւանդութիւնների միջեւ. այնուհետեւ բանասէրը, աւելի առաջ տանելով իր փաստագրութիւնները, հայկական աւանդութիւնները, աւելի ճիշտ Արա Գեղեցիկի մասին հայ մատենագրութիւնից (Խորենացի) մեղ աւանդուած մի քանի տողերը կամ Պղատոնի մի ակնարկը հայ երի կամ երսու մասին (որ նոյնացւել է Արայի հետ), դարձրել է Հիմնաքար, որի վրայ բարձրացւած է տեսել Ալիցեննայի եւ Դանտէի դրական կառոյցները, որոնք «փառք ու պատիւ են բերել նրանց» : Շահսուլարեանը Դանտէի «Աստածային կատակերգութեան» եւ Աւիցեննայի «Հայյ-Իրն-Եաքզան» վիպակի հնթակայական ընդհանուրութեան իր փաստին ելակէտ է ընդունել Բերտելսի «Անվանական և պարագաներ» կատարութեանը, որը վերնագրով յօդւածից բերւած մի արտայայտութիւն : Սակայն Բերտելսի վաղնջական (յօդւածը տպագրւած է 1938ին) եւ ենթադրական խօսքը. «Այստեղ (այսինքն «Հայյ-Իրն-Եաքզան» վիպակում) մենք, կարծեն (ընդդումը մերն է. Ա. Տ.) դտնում ենք Դանտէի «Աստածային կատակերգութեան» Հիմնական մոտիւի նշանագումը», Շահսուլարեանը ընդունել է իրերեւ անտարակուսելի ճշմարտութիւն, որի հաստատման համար բերում է մի փաստ, որը պէտք է ծառայէր բոլորովին ուրիշ մի ճշմարտութիւն հաստատելու համար : Շահսուլարեանը իրերեւ փաստ բերել է «Դժոխք»ի մեր թարգմանութեան 1947 թ. Հրատարակութեան չորրորդ երգի տարբեր տեղերից երեք եռատող (տառ. 112-114, 121-123 եւ 142-144), որոնց մէջ Դանտէ թւարկում է հին յունա-հռոմէական աւանդութեան եւ պատմութեան հերոֆներին եւ հնագարեան ու միջնադարեան իմաստուններին : Այստեղ բերենք մեղ հետաքրքրող վերջին եռատողը.

Պաղոմէսան եւ Եւկլիտը չափագէտ,
Հիպակոկրատը, Աւեցեննան, Գալիէն,
Աւերրոյէն, որ եղաւ մեծ մեկնագէտ:

Շահսուլվարեանը Դանտէի այս եռատողի մէջ Աւեցեննա անունը դանելով հնադարեան յոյն մտածողների անունների շարքում, եզրակացրել է. որ Դանտէի «Աստածային կատակերգութիւնը» իր մի շարք կողմէերով նման է Աւեցեննայի «Հայոյ-Իբն-Եաքզան» վիպակին, դրանում չենք կասկածում»²:

Նշենք, որ եռատողի մէջ հնադարեան յոյն մտածողների շարքում է ոչ միայն միջնադարեան իսլամ մտածող Իբն-Սինա Աւեցեննան, այլև միջնադարեան մի ուրիշ իսլամ մտածող, Իբն-Ռոշդ Աւերրոյէն կամ Աւերրոէսը:

Շահսուլվարեանը եթէ մի քիչ խորամուխ լինէր ժամանակակից դանտէադիտութեան մէջ, կ'իմանար, որ երկու իսլամ մտածողների ներկայութիւնը յոյն վեց մտածողների շարքում, ցոյց է տաթիս, որ Դանտէն նրանց ծանօթ է սոսկ իրեւ մտածողներ եւ նրանց ազդեցութիւնը Դանտէի վրայ կարող էր լինել գաղափարական եւ ոչ թէ գրական կամ ենթակայական:

«Ինչպէս տեսնում ենք, Դանտէն, իսկապէս, իմացել է Աւեցեննային, գրել է Շահսուլվարեան, «Դժոխվ»ի յիշեալ տողերը բերելուց անմիջապէս յիտոյ եւ չի յիշատակում Աւերրոէսին, որին Դանտէն աւելի լաւ է իմացել»:

Դանտէի գաղափարների վրայ մեծ աղդեցութիւն է գործել յատկապէս Աւերրոէսը, քանի որ վերջինս լինելով իսպանացի իսլամ եւ Աւեցեննայից մի գար յիտոյ ասպարէզ զարով (ժԲ գար), աւելի հանրածանօթ էր Եւրոպայում թէ իրեւ ուսցինալիստ փիլիսոփայ (որի փիլիսոփայութիւնը իր անունով կոչւել է Աւերրոյիզմ) եւ թէ իրեւ Արիստոտելի երկերի նշանաւոր մեկնարան («մեծ մեկնագէտ»): Աւերրոյիզմը կամ Արիստոտելի երկերի ուսցինալիստական մեկնարաթիւնը Դանտէին ծանօթ էր բնականարար Աւերրոէսի երկերի լատիներէն աղբաւրներից:

Ժամանակակից դանտէագիտութիւնը նշում է, որ Դանտէի «Կատակերգութեան» վրայ աղդեցութիւն ունեցել է Դանտէի դարաշրջանի մուսուլմանական փիլիսոփայութիւնը (Աւերրոյիզմը), բայց ոչ մուսուլմանական էսկատոլոգիան:

Ուրեմն զուր է «Դժոխվ»ից բերած տողերից հետեւցնել եւ «մի շարք կողմէերով» նմանութիւն տեսնել Դանտէի պոէմի եւ Աւեցեննայի

2. Ա. ՇԱՀՍՈՒԼՎԱՐԵԱՆ, Աւեցեննան եւ հայ մատենագրութիւնը, Հայպետհրատ, 1980, էջ 96:

վիպակի միջեւ։ Շահսուլվարեանը նման ընդհանրութիւններ տեսնելուց յետոյ Դանտէի եւ Աւիցեննայի երկերի միջեւ, տեսել է նաև այդ ընդհանրութիւնների արմատը։

«Մենք հաւանական ենք համարում այն, - գրել է մեր բանասէրը, - որ նրանք երկուսն էլ (Աւիցեննան եւ Դանտէն. Ա. Տ.) իրենց ձեռքի տակ ունեցել են անիլի հիմ մի աղքիւր, կամ աղքիւրմեր, որպես վերսակծումը, վերածմանը փառք ու պատի է բերել նրանց (Հնդգծումը հեղինակին է)։ Այստեղ մենք նկատի ունենք Արայի առասպեկը, որը ինչպէս յայտնի է, ունի հայկական ծագում եւ ձեւակերպւել է մեր թւականից առաջ, 7-6րդ դարերի միջեւ, երբ արդէն Հայերը հանդէս էին եկել Ուրարտուի հողամասին վրայ։ Փորձենք հմանաւորել մեր այս թեղը»³։

Եւ Շահսուլվարեանը իր քեզը հիմնաւորում է Պղատոնի «Հանրապետութեան» 10րդ գլխում արւած մի ակնարկութեան վրայ. «Ճագումով պամփիւրացի հայորդի կրի» մասին, որ, ըստ Պղատոնի պատմաժին, ընկնելով պատերազմում, հոգին բաժանւում է մարմնից, գնում է հանդերձեալ աշխարհ, այստեղ տեսնում է դատաւորներին, մեղալուրներին եւ արդարներին, եւ ապա, վերադառնալով երկեր, վերամիանում է իր մարմնին եւ մարդկանց պատմում իր տեսածները հանդերձեալ կեանքում։

Մենք պատճառ չունենք վիճարկելու Պղատոնի յիշատակած հայորդի կրի եւ հայկական աւանդութեան կամ մատենադրութեան մէջ յիշւած Արայի նոյնութիւնը, քանի որ դա հաստատում են մի շարք բանասէրներ։

Բայց վիճարկում ենք «Արայի առասպեկը» ընդունելը իրեւ աղբիւր կամ հիմք Աւիցեննայի եւ Դանտէի պատկերացումների։

Միշին դարերում տարածւած էին հանդերձեալ աշխարհի մասին պատկերացումներ թէ՛ Արեւմուտքում եւ թէ Արեւելքում։ Միջնադարեան ժողովրդական աւանդութիւնների ու գրականութեան մէջ պատմել ու նկարագրել են հոգիների վիճակը հանդերձեալ կեանքում, պատժած մեղաւորներն ու վարձատրւած արդարները, սատանաներն ու հրեշտակները, դժոխքն ու դրախտը։ Միայն Արեւմուտքում նման տեսիլքների պատմութիւնները թէ՛ դրաւոր եւ թէ բանաւոր ձեռով այնքան շատ էին, որ կարծես «չնչւող օդի մէջ էին», սում է ժամանակակից իտալացի հետազոտող Սամմինիատելլին։

Հին Յոյները եւ Հոոմէացիները եւս ունեցել են հանդերձեալ աշխարհի մասին պատկերացումներ։ Հոմերոսի «Ողիսական»ում՝ հանդերձեալ աշխարհի է գնում Ողիսեւոը, իսկ Վիրդիլիոսի «Ենէական»

ում՝ Ենէասը: Յունա-հռոմէական դիցաբանութեան մէջ հանդերձեալ աշխարհ են այցելում Բագոսը, Հերկիւդէս եւ Օրփէուր:

Այնպէս որ Դանտէն հազիւ թէ կարիք ունենար դիմելու արեւելեան կամ հայկական աղբիւրներին, մանաւանդ որ Արեւելքի միջնադարեան դրաւոր աղբիւրները ընդհանուր չատ բան ունէին Արեւմուտքի միջնադարեան եւ հնադարեան աղբիւրների հետ, իսկ այդ ընդհանրութիւնները Սանմինիատելին բացատրում է մարդու բնութեան նոյնութեամբ՝ հետաքրքրելու իր ապագայ ճակատագրով, աշխարհում լաւ ու վատ գործերը հանդերձեալ աշխարհում ըստ արժաննույն հատուցւած, չարագործը պատժւած եւ բարեղործը վարձատրւած տեսնելու ցանկութեամբ:

Ժամանակակից դանտէապէտները նոյնիսկ Արեւմուտքի միջնադարեան տեսիլքները հանդերձեալ կեանքի մասին չատ հեռու են գտնում Դանտէի շռայլ երեւակայութեան պտուղից: Արեւմուտքի միջնադարեան տեսիլքների դրաւոր աղբիւրները մշուշապատճ վլնմատիկ եւ անարեւստ էին: Արեւմուտքի միջնադարեան տեսիլքները Դանտէի համար ծառայել են սոսկ «հում եւ անկենդան նիւթ», որ մեծ բանաստեղծը իր արւեստագէտի ուժով չնչաւորել ու ձեւաւորել է եւ մտածողի մթքով օժտել հարուստ ու բազմակողմանի բովանդակութեամբ եւ վերածել է իր անմահ պոէմին:

Շահսուլվարեանը իր աշխատութեան մի ուրիշ էջում դարձեալ գրում է. «Նրա (Արա առասպեկի. Ա. Տ.) աղդեցութիւնը մեծ է եղել ոչ միայն Արեւելքում, այլև Եւրոպայում, ուր նա դրաւել է յատկապէս Վերածնութեան շրջանի դրողների ուշադրութիւնը եւ վճռականապէս սիստիկ նրանց այդ նիւթի հիման վրայ գրել նոր բանաստեղծութիւններ: Այստեղ մենք նկատի ունենք իստալացի մեծ բանաստեղծ Դանտէի, որի «Աստվածային կատակերգութեան» սիթէն մեր կարծիքով, իր գլխաւորում խտօրեն կանխարշալել է մեր առապելի աղդեցութեամբ» (ընդգծ. մերն է. Ա. Տ.):

Զանց առնելով Արայի առասպեկի աղդեցութիւնը ամէնուրեք տեսնելու («ոչ միայն Արեւելքում, այլև Եւրոպայում») Շահսուլվարեանի հակումը հաստատող փաստերը, այստեղ քննենք միայն այն, ինչ որ բանասէրը «նկատի է ունեցել», այսինքն Արայի առասպեկի աղդեցութիւնը Դանտէի ստեղծագործութեան վրայ:

Այստեղ Շահսուլվարեանն իր քեզը հիմնաւորում է տարբեր, բայց ոչ նւազ տարօրինակ փաստով Արայի եւ Վերգիլիոսի կերպարների կարծեցեալ նմանութեամբ:

«Այս ո՞րսեղից, ո՞ր աղբիւրից է օգտենել Դանտէ Վերգիլիոսի կերպարը ստեղծելիս», — հարցնում է Շահսուլվարեանը բանագոյ

բոնածի տոնով: Պարզւում է, - շարունակում է մեր բանասէրը, պատասխաննելով իր հարցին, - նա իմացել է Արա Գեղեցիկի առասպելը եւ ոչ միայն դա, այլև արեւելեան համանման մի շարք դրական յուշարձաններ, որոնք ստիպում են մեզ ենթագրելու եւ ապա նաեւ ապացուցելու մեր Արայի եւ Վիրդիլիոսի կերպարների պատճառական կապը⁵:

«Ճնշի՞ց է պարզւում» - կարող ենք հարցնել Շահսուվարեանին, երբ Դանտէի ամբողջ «Կատակերգութեան» մէջ չկայ որեւէ ակնարկութիւն ո՛չ Արայի, ո՛չ հայկական ուրիշ աւանդութեան եւ ոչ էլ հայկական որեւէ պատմական դէմքի ու դէպքի մասին:

Տեսնենք «Արայի եւ Վիրդիլիոսի կերպարների պատճառական կապը» հաստատող Շահսուվարեանի ապացոյցները:

«Դժոխքօք» հինգերորդ երգի մեր թարգմանութիւնից Շահսուվարեանը դարձեալ բերել է երեք եռասողի (տտ. 52-60), ուր ներկայացւած է Ասորեստանի թագուհի Շամիրամը իրեւ վաւաշոտ կին: Բայց որովհետեւ Շամիրամի մասին տեղեկութիւնը Դանտէ տալիս է Վիրդիլիոսի բերանով եւ քանի որ Վիրդիլիոսն էլ, ըստ Շահսուվարեանի, նոյնացւում է Արայի հետ, այստեղից էլ բանասէրը եղբակացնում է,

1. որ Դանտէ «շատ բան է իմացել արեւելեան այդ հին առասպելից».

2. որ Դանտէ տեղեակ է եղել ոչ միայն Շամիրամի կեանքին, այլև վաւաշոտութեանը, բայց չի յիշատակել իր տեղեկութեան աղքիւրը:

3. որ, հետեւարար, «եթէ Դանտէ այստեղից մի քայլ եւս կատարէր, ապա նա, անշուշտ, Շամիրամի վաւաշոտութիւնը ապացուցելու համար որպէս օրինակ կը յիշատակէ Արա Գեղեցիկին, որը եղել է այդ պիղծ կնոջ զնոջ զնոջ մէկը: Սակայն նա, մեր կարծիքով, դա զիտակցարար չի անում, քաջ իմանալով, որ այդ պատմութիւնը հաղորդողը (Վիրդիլիոսը) ոչ այլ ոք է, եթէ ոչ հենց ինքը Արան՝ հին մեռնող եւ յարութիւն առնող աստեածը: Նշանակում է, - հետեւցնում է Շահսուվարեանը իր փաստարկից, - եթէ փաստ է, որ Վիրդիլիոսը հանդիսանում է հին մեռնող եւ յարութիւն առնող աստեած՝ ԱղասՓերի մարմնացումը եւ անժիտելի է, որ վերջինիս պաշտամունքը ունի հայկական ծագում, նշանակում՝ թէ ապացուցւած պէտք է համարել, որ Դանտէն հետաքրքրեւել է ոչ միայն յունական ու իտալական, այլև հայկական հեթանոսական շրջանի կուլտուրայով եւ իր միստիկական կերպարները ստեղծելիս նիւթ է քաղել նաեւ մեր տարեգրութիւններից»⁶ (ընդգծումը մերն է. Ա. Տ.):

5. Նոյն տեղ, էջ 111:

6. Նոյն տեղ, էջ 112:

Դանտէի տեղեկութիւնը Շամիրամի մասին անշուշտ առարկելի չէ, քանի որ կան «Դժոխվք»ի հինգերորդ երգի յիշեալ առղերը: Բայց առարկելի է Դանտէի տեղեկութեան հայկական աղբիւրը, որ մատնանշել է Շահսուլարեանը, եւ յետոյ առարկելի է Շահսուլարեանի հետեւութիւնը թէ, քանի որ Դանտէի մօա Շամիրամի մասին այդպատմութիւնը հազորգողը Վերդիկոսն է, եւ քանի որ Շամիրամի յայտնի զույերից մէկը Արա Գեղեցիկն է, ապա ուրեմն Վերդիկոսը «ոչ այլ ոք է, եթէ ոչ հենց ինքը Արան՝ հին մեռնող եւ յարութիւն առնող աստιածը»:

«Դժոխվք»ի հինգերորդ երգի 58–60 եռատողում ակնարկւած է Շամիրամի մասին Դանտէի տեղեկութեան պատմական աղբիւրը («Շամիրամն է, որ ինչպէս զիրքն է յիշում...»): «Դժոխվք»ի 1947 թ. հրատարակութեան ծանօթադրութիւնների մէջ այդ եռատողը մէնք բացատրել ենք, որ Դանտէի տեղեկութեան աղբիւրը հինգերորդ դարի լատին պատմաբան Օրոսիոսի պատմածն է, կամ «Պատմութիւն» գրքի առաջին վլուխը, ինչպէս աւելի որոշակի գրել էինք «Կատակերգութեան» 1969 թ. հրատարակութեան ծանօթութեան մէջ: Վերջին ծանօթութեան մէջ աւելացրել էինք նաեւ, որ «բոլոր միջնադարեան զրողները Շամիրամին ներկայացնում են իրեն սանձարձակ վաւաշուութեան տիպար»:

Ահա սրանք են Դանտէի տեղեկութեան աղբիւրները. Հետեւարար անընդունելի է Շահսուլարեանի այն պնդումը թէ Դանտէն «իր միստիկական կերպարները ստեղծելիս նիւթ է քաղել նաեւ մեր (այսինքն հայկական. Ա. Տ.) տարեգործութիւններից»:

Մեր տարեգործութիւնները Դանտէին կարող էին ծանօթ լինել միայն լատիներէն թարգմանութիւնների միջոցով, որոնք չեն եղել: Նոյնիսկ հին յունական աւանդութիւնները և նշանաւոր դէմքերը, ինչպէս նաեւ Արեւելքի իրականութեան մի քանի երեւելի գործիչները, որոնք յիշատակւած են «Կատակերգութեան» մէջ, Դանտէն զիտէր միայն լատինական աղբիւրներից, քանի որ «չ յունարէն գիտէր, ոչ էլ արեւելեան որեւէ ի եղու, ինչպէս նշում են կենասագիրները»:

Նշենք, որ «Դժոխվք»ի նոյն հինգերորդ երգում Վերդիկոսը Դանտէին ցոյց է տալիս, բացի Շամիրամից, ուրիշ «հեշտասէր մեղաւորներ», որոնցից ոչ մէկը հայկական ծագում չունի. գրանք են, ըստ կարգի, Դիտոնը, Կէնոպատրան, Զեղինէն, Աքելլէսու, Պարիսը, Տրիստանը եւ վերջապէս Ֆրանչեսկա դա Ծիմինին ու Պաղույ Մալատեստան: Արանք կամ հին յունական առասպելական դէմքեր են, կամ հին Հռոմէի հետ կապւած պատմական դէմք (Կիշոպատրա), կամ եւրոպ. միջնադարեան ասովետ (Տրիստան) եւ կամ Դանտէի դարաշրջանի իտալացիներ (Ֆրանչեսկա եւ Պաղույ): Այս դէմքերը Դանտէին ծանօթ էին արեւմտեան դրականութիւնից կամ իրականութիւնից: Նմա-

նապէս Շամիրամի պատմութիւնը Դանտէին յայտնի կարող էր լինել միայն արեւմտեան աղբերւներից :

Իսկ Շահսուլվարեանի այն համոզումը թէ Դանտէի «Կատակերպութեան» մէջ Վերգիլիոսը «ոչ այլ ոք է, եթէ ոչ հենց ինքը՝ Արան», կարող է թւալ աւելի քան տարօրինակ : Դանտէի առաջնորդ Վերգիլիոսը մեռած եւ յարութիւն առած «մշտնջենական թափառող» չէ, ինչպէս Շահսուլվարեանը ներկայացրել է Արային (թէեւ այդ մասին ոչ մի ակնարկ չկայ ո՛չ Խորենացու մօտ, ո՛չ Պղատոնի մօտ) եւ արեւելեան աւանդութեան մէջ՝ Աղասիքըին :

Վերգիլիոսը մեռած է, բայց ոչ յարութիւն առած (յարութիւն առնել նշանակում է վերակենդանանալ մարմնով) եւ նրա հոգին, ըստ Դանտէի զանուում է հանդերձեալ աշխարհի որոշ վայրում, հնադարեան նշանաւոր բանաստեղծների, իմաստունների եւ հերոսների ըրբջանակում : Բէտարիչէի ինդրանիքով (որ նոյնպէս մահից յետոյ գըտնուում է հանդերձեալ աշխարհում, իրեն սահմանւած վայրում) Վերգիլիոսը առաջնորդում է Դանտէին մինչեւ հանդերձեալ աշխարհի երկրային Դրախտ, իսկ երկրային Դրախտից մինչեւ երկնային դրախտ՝ Դանտէի առաջնորդութիւնը ստանձնում է ինքը Բէտարիչէն : Այսպէս Վերգիլիոս Դանտէին առաջնորդում է հանդերձեալ աշխարհում մինչեւ որոշեալ վայր, որից յետոյ վերապառնում է իր տեղը, հետեւարար Վերգիլիոսը «մշտնջենական թափառող» չէ, ինչպէս «մշտնջենական թափառող» չէ Բէտարիչէն :

Վերգիլիոսը չի վերակենդանանում եւ չի վերադառնում երկիր՝ հանդերձեալ աշխարհում իր տեսածները պատմելու, ինչպէս անում է Արան, ըստ Պղատոնի պատմածին (եթէ հասաստավէս ընդունենք որ Պղատոնի «Հայ Երը, ծագումով պամփիլիացի», մեր Արան է): Վերգիլիոսը Դանտէի «Կատակերպութեան» մէջ այլարանական անձ է եւ ոչ «միստիկական», ինչպէս բացատրում է Շահսուլվարեան եւ մարմնաւորում է բանականութիւնը : Այլարանական եւ ոչ «միստիկական» անձ է նաև Բէտարիչէն, որ մարմնաւորում է հաւատը : Վերգիլիոսը իրական կամ պատմական դէմք է, իսկ Արան՝ տրասպելական : Վերգիլիոսը Դանտէի համար «վեհագոյն», «հռչակաւոր իմաստուն» է, իսկ մեր Արան չունի այլպիսի հանդամանք :

Մեր առասպեկական Արայի մօտ մենք չենք տեսնում դանտէական Վերգիլիոսի այս յատկանիցներից ոչ մէկը :

Եւ, վերջապէս, ենթակայական ի՞նչ առնջութիւն կարող են ունենալ մեր Արա Գեղեցիկի մասին աւանդւած մի քանի տողերը այն ծաւալուն գերի հետ, որ կատարում է Վերգիլիոսը Դանտէի «Կատակերպութեան» մէջ :

Ինչպէս տեսնում ենք, Շահսուլվարեանի համար բաւական է եղել, որ Դանտէի մարող «Կատակերպութեան» մէջ մի անդամ հանդիպել

Շամիբամ անունը, որպէսզի մի ամբողջ տեսութիւն կառուցի Շամիբամ-Արա-Վիրդիլիսու առանցքի վրայ: Յիշենք Շահսուվարեանի խօսքերը. «Ասուածային կատակերգութեան» ենթական, մեր կարծիքով, իր գլխաւորումը խսորէն կանխորոշւել է մեր առասպելի աղդեցութեամբ», եւ իր ստեղծած կառոյցը ներկայացնի իրբեւ մի դիւտ, որ վրիպել է բանասէրների ուշագրութիւնից:

«Մեր կողմից բերած բոլոր այս փաստերից յետոյ, — զբել է Շահսուվարեան, իր կառոյցը աւարտած մարդու ինքնագոհութեամբ, — այժմ որքան պրիմիտիվ ու տարօրինակ է քում, երբ արեւելագէտներ Մոդին եւ Ֆերտելսը քողած Դանատէի Ասուածային կատակերգութեան» իմբնական աղքիւրը՝ մեր Արա Գեղեցիկը (Ընդգծումը մերն է. Ա. Տ.) Վիրդիլիսոսի նախատիպը փորձում են տեսնել Աւցիցեննայի «Հայյ-Իրն-Ետքան» վիպակում եւ պահաւու «Արտա վիրապ» գրական յուշարձմանում»:

Ճշմարտութիւնն այն է, որ գերմանացի արեւելագէտ Մոդին անցեալ գարի վերջերին եւ սովիտական արեւելագէտ Բերտելսը մեր գարի 30ական թւականներին՝ շատ աւելի հաստատ կուաններ են ունեցել Դանատէի «Ասուածային կատակերգութեան» վրայ արեւելեան գրասոր աղքիւրների ազգեցութիւնն տեսնելու (այլ բան է թէ այդ ազգեցութիւնը ներկայումս ընդունում է, թէ ոչ), քան ունի Շահսուվարեանը զուտ հայկական ազգեցութիւն տեսնելով, եւ մտացածին հետեւութիւններ անելով Պատոսնի եւ Խորենացու մի քանի Ժամանութիւնից:

Եթէ Շահսուվարեան Դանատէի «Քաւարան»ի վերջում նկատած լինէր Եփրատ եւ Տիգրիս գետերի անունները, նորից պիտի բացաւ կանչէր եւ հարցնէր. «Այս ո՞ր բանելից, ի՞նչ աղքիւրից է օգտւել Դանատէին այդ գետերի անունները յիշելիս»: Եւ լինքն էլ իր հարցին պիտի պատասխանէր. «Պարզուում է, որ նու շատ բան իմացել է պատմական հայաստանի այդ գետերից»: Մինչդեռ Դանատէն Եփրատ եւ Տիգրիս գետերի անունները դիմէտ եւ վերցըրել է Ասուածանչի «Ծննդոց» զըրդից (Բ. 10-15), ուր նրանք յիշած են իրեւե երկու գետեր երկրաշին դրախտում հոսուզ չորս գետերից: Բացի դրանից, Դանատէն Եփրատ եւ Տիգրիս գետերի անունները յիշում է իրեւե նմանութիւն իր նկարագրած երկրային դրախտի երկու գետերի (Լեթէ եւ Եւնոյէ): Դանատէի տողը «կարծես տեսայ գետերն Եփրատ ու Տիգրիս» (Քաւարան, լ. 19, 112) եւ համապատասխան ծանօթութիւնը «Ասուածային կապերգութեան» 1969 թ. հայերէն հրատարակութեան մէջ՝ պարզում են իրողութիւնը:

Առոյզն այն է, — եւ դա երբեք չէ կարող նւազեցնել մեզ համար

Դանտէի ստեղծագործութեան արժէքը - , որ Դանտէ իր ամբողջ «կատակերգութեան» մէջ չի լիշտակում հայկական աւանդութեան, պատմութեան կամ իրականութեան հետ կապւած որեւէ անուն :

Դանտէի, Շեքսպիրի, Սերվանտէսի, Գէոթէի, Բայրոնի, Հիւդոյի եւ այլոց մեծութիւնները որոշում են իրենց ստեղծած դրական կոթողներով եւ ոչ թէ այս կամ այն ազդի պատմութիւնից կամ աւանդութիւնից քաղած նիւթերով կամ անուններով :

Դանտէի կիռը Ֆրանսացիների աչքին չի նւազում միայն այն պատճառով, որ իտալական հանճարը, իր «կատակերգութեան» մէջ վաստ է խօսում Ֆրանսացիների մասին. եւ կամ Շեքսպիրի կշիռը Իտալացիների աչքին չի բարձրանում միայն այն պատճառով, որ անելիական հանճարը իր խաղերուն մէջ յաճախ է օգտագործում իտալական թեմաներ եւ անուններ :

Դանտէ, ճիշտ է, հայկական անուններ չի տալիս, այսուհանդերձ Ալսուածային կատակերգութեան» հայերէն հրատարակութեան ծանօթագրութիւնների մէջ մենք երեք տեղ յիշատակել ենք անուններ, որոնք ենթագրաբար կամ հաստատաբար կապւած են հայ իրականութեան հետ (տես «Դժոխք» Լի, 28, «Քաւարան» Զ, 89-90 եւ «Քաւարան» ԺԲ, 52-54 տողերի ծանօթութիւնները) :

Ամէնուրեք հայկականութիւն տեսնելու, ամէն ինչ հայկականով չափելու կամ ամէն ինչի արմատը հայկական համարելու միտումները, որոնք յատուկ են ոչ սոսկ Շահսուլվարեանին եւ որոնք վերջի վերջոյ բխում են հայկականը ամէն ինչից վեր դասելու մարմաշից, հայստանի Գրողների հինգերորդ համագումարում որակեցին «աղդային սնապարծութիւն» . եւ որակողն էր մեր գրական մեծագոյն միտքը եւ մեր ուխտեալ, ներերական գերմեռանդ հայրենասէրը, որի տարածամ եւ եղերական վախճանը, աւաղ, այնքան կարենէր խոցեց մեր սրտերը :

«Աղդային սնապարծութիւնը» ունի նաեւ մի ուրիշ անուն, եւ կոչում է «հայկական նարգիսութիւն», այսինքն «ինքնասիրահարութիւն» : Խսկ ինքնասիրահարութիւնը մի զգացում է, որ մեղ համար ո'չ ձեռնոտու է, ո'չ ցանկալի, քանի որ մեղ կարող է հասցնել առասպելական նարգիսի ոչ ցանկալի վիճակին :

Աղդային սնապարծութիւնից կամ հայկական նարգիսութիւնից թելադրաւծ մտքերն ու կարծիքները, փաստարկներն ու հնարքները բնականաբար չունեն գիտական արժէք եւ չեն կարող յանձնարարելի դառնալ հայկական հանրագիտարանի համար :